

աղջիկը նստած կար կ'ընէին : Պառաւին առջեւ պզտիկ կրակարան՝ մը կար , ատեն ատեն իր քաշուած ձեռուները անոր վրայ կը տաքցընէր . ճրագնին ալ հողէ կանթեղ՝ մըն էր որ պլպլալով հագիւ քիչ մը լոյս կուտար : Աղջիկը յանկարծ գլուխը վերցուց , խղճալով մը նայեցաւ իր պառաւ մօրը վրայ , ու անուշուծեամբ ըսաւ անոր . “ Սայրիկ , արդեօք միշտ ասանկ խեղճ՝ կերպով անցեր է քու կեանքդ : — Որդեակ , ինչ ըսեմ քեզի , ըսաւ պառաւը . Մտուած տէր է , ամէն բան մեր աղէկութեանը համար կ'ընէ ” : Մխօսքիս վրայ քիչ մը լուռ կենալէն ետքը դարձաւ նորէն ըսաւ . “ Քու հայրդ երբոր մեռաւ , անանկ մեծ էր սրտիս կսկիծն որ կարծէի թէ ալ ես մխիթարուածիւն պիտի չգըտնեմ . հիմայ ալ թէ որ հայրդ մեր աս խեղճութիւնը տեսնէր , յայտնի է որ սիրտը կտոր կտոր պիտի ըլլար . ուրեմն Մտուած իրեն բարիք ըրաւ որ աս նեղութենէս ազատեց ” : Ղեկը ձայն չհանեց , գլուխը ծռեց , ու սիրտը լեցուած՝ սկըսաւ առանց ձայնի արցունք թափել ձեռքի լաթին վրայ : Սայրը դարձաւ աս ալ ըսաւ իրեն . “ Իայց աս ալ նայէ , որդեակ , որ Մտուած ինչպէս որ ասով հօրդ բարիք ըրաւ , մեզ ալ ձեռքէ չթողուց . ինչ կը պակսի մեզի . փառք Մտուածոյ , ահա ապրուստնիս կը հանենք . որչափ մարդիկ կան որ օրուան հացին ալ կարօտ են . պէտք է որ քիչով գոհ ըլլանք , ան քիչն ալ մեր ձեռքին աշխատանքովը գտնենք . վասն զի գիտենք թէ Մտուած մարդուս պատիժ տուած է որ աշխատանքով ճարէ իր կերակուրը : Պառն ինծի մեծ պարգև մըն ես , որ Մտուած տուեր է ինծի . ալ ինչ իրաւունք ունիմ գանգատելու իրեն դէմ ” : Մխօսքիս վրայ խեղճ աղջկանը սիրտը

սաստիկ շարժելով , լալով ընկաւ մօրը գիրկը ու ձեռուները պագաւ :

Մտեն մայրն ալ դողդոջուն ձայնով ըսաւ . “ Որդեակ , երջանկու թիւնը շատ հարստութիւն ունենալէ , հապա հաստատուն յոյս ուսեր ունենալն է . մեր յոյսը ուսերը աս անցաւոր աշխարհքիս վրայ պիտի չըլլայ : Մտուածմէ վերջը դու ես իմ ամէն բարիքս աս աշխարհքիս վրայ , որ երազի մը պէս կ'անցնի կ'երթայ ” : Մը ըսելով պառաւը ուրախութեամբ գրկեց իր սիրելի զաւակը : Սրան շատ չանցաւ , սուրբ ճգնաւորին մէկը տեսիլք տեսաւ որ ան խեղճ տնակէն երկու հատ փառաւոր հոգիներ ելան , ու հրեշտակներու բազմութեան հետ ուրախութեմբ երգելով երկինք թռան :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՁՈՒՍՐՃԱԼԻ ԴԻՊՈՒԱԾՆԵՐ

Նախադրել է Նախադրել :

ՊԵՂԱՑԻՆ մէկը իրեն իշովը տեղ մը կ'երթար : Թեթեւօրիկին մէկը խեղճին հետը իյնալ ուղեւոր կը սկսի ետեէն կանչել . “ Որ կ'երթաք երկուքնիդ մէկտեղ ” : Պեղացին դարձաւ , “ Իրեքիս համար խոտ փնտռելու ” ըսաւ :

ՏԳԷԻ Ծախորդի Դապաստան :

ՊԵՐՄԱՆԱՑԻՆ մէկը ձմեռ ատեն Ռուսաստանի գեղերէն մէկուն մէջ քալելու ատենը , շատ մը շներ ասոր ետեէն կ'իյնան : Շուտ մը գետին կը ծռի որ քար մը առնէ ու անոնց նետէ . տեսնէ որ ամէն քար սառեր է , փրցնելու ճար չկայ . “ Մը ինչ անիծած երկիր է , կ'ըսէ , որ քարերը կը կապեն ու շները կ'արձրկեն ” :